ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» ապրիլի 2012թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Շրջանային փողոցի հ.41՝ 129.5քմ ընդհանուր մակերեսով տունը և դրանով զբաղեցրած 351.61քմ հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 02.06.2011թ. հ.2752072 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Պետրոս Չմբտյանին, Խաթուն Կարապետյանին, Եսթեր Մամիկոնյանին, Ավետիս Չմբթյանին, Արթուր Չմբթյանին, Արման Չմբթյանին, Մարիամ Չմբտյանին, Մովսես Չմբտյանին և Անահիտ Չմբտյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետրոս Չմբտյանը դիմել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան՝ Շրջանային փողոցի հ.41 բնակելի տունն իր ընտանիքի անդամների անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Աշխատավորների դեպուտատների Բերիայի շրջսովետի գործադիր կոմիտեի 1953 թվականի մայիսի 23-ի նիստի հ.8 արձանագրության քաղվածքի համաձայն՝ Ավետիս Պետրոսի Չմբտյանին անհատական բնակարան կառուցելու նպատակով հատկացվել է Բերիայի ավանի 3-րդ մաս 8ա 34 հողամասը (Շրջանային փողոց հ.41) և բնակարանի կառուցման համար վարկ: 1954 թվականի մայիսի 24-ի ակտով թույլատրվել է բնակելի տունը հանձնել է շահագործման Ավետիս Չմբտյանին:

Վարկի պարտքի հերթական մուծումները ժամանակին չկատարելու պատճառով նախկին ՀՍՍՌ Երևան քաղաքի Շահումյանի շրջանի ժողդատարանի 23.11.1963թ. վճռով Մարի Չմբտյանին զրկել են շենքի սեփականատիրական իրավունքից, վարկի պարտքի գանձումը դարձրել վարկով կառուցված շենքի վրա և այն հանձնել շրջսովետի բնակֆոնդին, պատասխանողին թողնելով այնտեղ բնակվելու վարձակալական հիմունքներով:

Պետրոս Չմբտյանը մինչ օրս ընտանիքի 9 անձով բնակվում են Շրջանային փողոցի հ.41 բնակելի տանը:

Նկատի ունենալով, որ Շրջանային փողոցի հ.41 բնակելի տունը պետականացվել է, իսկ Երևան քաղաքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 9-ի հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները և բնակելի տները կարող են Երևանի քաղաքապետի որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել ՀՀ քաղաքացիներին, ովքեր մշտապես (փաստացի) բնակվում են դրանցում և հաշվառված են այդ բնակարաններում կամ բնակելի տներում՝ ներկայացնելով բնակարանը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթերը, ապա «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ